Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
18.12.2017թ. N 3 ՈՐՈՇՄԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդարանական վերահսկողության 2018 թվականի տարեկան ծրագիրը

1. Ուսումնասիրել ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 -Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագրով պայմանավորված՝ ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով ծնելիության բարձրացմանն ուղղված քայլերի ընթացքը:

2. Հաստատել «Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով ծնելիության բարձրացմանն ուղղված քայլերի ընթացքի հետ կապված խնդիրները» թեմայով ուսումնասիրությունների միջոցառումների ծրագիրը (հավելված 2):

3. Ուսումնասիրել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման, սեռային հարաբերակցության շեղումների կանխարգելման և կանխման ընթացքի հետ կապված խնդիրները:

4. Հաստատել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման, սեռային հարաբերակցության շեղումների կանխարգելման և կանխման ընթացքի հետ կապված խնդիրները» թեմայով ուսումնասիրությունների համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրը (հավելված 3):

5. Ուսումնասիրել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված խնդիրները»:

6. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված խնդիրների ուսումնասիրության համար միջոցառումների ծրագիրը (հավելված 4):

Հավելված 2

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
18.12.2017թ. N 3 ՈՐՈՇՄԱՄԲ

«Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով ծնելիության բարձրացմանն ուղղված քայլերի ընթացքի հետ կապված խնդիրները» թեմայով ուսումնասիրությունների միջոցառումների ծրագիրը

| Միջոցառման անվանումը | Կատարողը | Ժամկետները |
|---|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող՝ հղիների ախտաբանության վաղ աղտորոշման և բուժման ծրագրերի ուսումնասիրություն | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն | 10.01.2018-01.04.2018 |
| ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերահսկվող հղիության վարման և հսկողության բարելավման աշխատանքների ուսումնասիրություն | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ | 15.02.2018-01.04.2018 |
| ՀՀ առողջապահության նախարարության կողմից զույգերի մինչամուսնական հետազոտման և նախաբեղմնավորման խնամքի ներդրման մեխանիզմների վերաբերյալ առաջարկների մշակում | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ | 15.03.2018-01.11.2018 |
| Ընդունել վերահսկողության արդյունքների վերաբերյալ ԳՐԱՎՈՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և աշխատակարգով սահմանված կարգով այն ուղարկել Ազգային ժողովի մյուս մարմիններ («ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենք, 122-րդ հոդված, 6-րդ մաս): | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի որոշում | 01.12.2017 |

Հավելված 3

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
18.12.2017թ. N 3 ՈՐՈՇՄԱՄԲ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման, սեռային հարաբերակցության շեղումների կանխարգելման և կանխման ընթացքի հետ կապված խնդիրները» թեմայով ուսումնասիրությունների համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրը

| Միջոցառման անվանումը | Կատարողը | Ժամկետները |
|---|---|---|
| Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քաղաքականությունների մշակման փաստական, գիտա-վերլուծական հիմքի ապահովում | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն | 10.01.2018-01.04.2018 |
| Նորածինների սեռային կազմի ընթացիկ մշտադիտարկում (գերատեսչական և պաշտոնական վիճակագրություն) | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ | 15.02.2018-01.04.2018 |
| Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2017-2021թթ. Ծրագրի մշակում | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն | 01.04.2018-15.06.2018 |
| Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման մասին օրենսդրական նախաձեռնություն | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով | 01.06.2018-15.09.2018 |
| Ընդունել վերահսկողության արդյունքների վերաբերյալ ԳՐԱՎՈՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և աշխատակարգով սահմանված կարգով այն ուղարկել Ազգային ժողովի մյուս մարմիններ («ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենք, 122-րդ հոդված, 6-րդ մաս): | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի որոշում | 15.09.2018-15.12.2018 |

Հավելված 4

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
07.11.2017թ. N 3 ՈՐՈՇՄԱՄԲ

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված խնդիրների ուսումնասիրության համար միջոցառումների ծրագիրը

| Միջոցառման անվանումը | Կատարողը | Ժամկետները |
|---|---|---|
| Պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված օրենսդրության ուսումնասիրություն: | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարություն | 2018 թվականի ընթացքում |
| Ընտրանքային եղենակով ընտրված Պետպատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների 2017 թվականի ֆինանսավորման0 ուսումնասիրություն | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ | 2018 թվականի ընթացքում |
| Ընդունել վերահսկողության արդյունքների վերաբերյալ ԳՐԱՎՈՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և աշխատակարգով սահմանված կարգով այն ուղարկել Ազգային ժողովի մյուս մարմիններ («ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենք, 122-րդ հոդված, 6-րդ մաս): | ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի որոշում | 2018 թվականի ընթացքում |